ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԱՅՑԵԼԵՑ ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Հայրապետը հայաստանյան թեմերի առաջնորդների ուղեկցությամբ ապրիլի 13-ին այցելեց վարչապետ Արմեն Դարբինյանին: Վեհափառ Հայրապետը շնորհավորեց պարոն Դարբինյանին՝ ՀՀ վարչապետի պաշտոնում նշանակվելու կապակցությամբ: Կարևորելով պետական իշխանության գործադիր մարմնի դերը անցումային փուլում տնտեսության և հասարակության կայուն, շարունակական զարգացման գործընթացում՝ Նորին Սրբությունն ասաց. «Գաղափարների իրականացումը կպահանջի բացառիկ ունակություններ»: Վեհափառ Հայրապետը համոզվածություն հայտնեց, որ արհեստավարժության և իրազեկության սկզբունքներով ձևավորվող կառավարությունն ի զորու կլինի լուծել հիշյալ խնդիրները:

Պատասխան խոսքում վարչապետ Արմեն Դարբինյանը նշեց, որ իր հիմնական խնդիրը տնտեսական բարեփոխումների շարունակական ընթացքի ապահովումն է: Խնդրի լուծման նպատակով կառավարության ղեկավարն առանձնապես կարևորեց կառուցողական ուժերի նկատմամբ ներքին վստահության ամրապնդման, արտերկրում մեր պետության գործընկերներին այդ վստահության ներշնչման անհրաժեշտությունը:

Քննարկվեցին քրիստոնեությունը Հայաստանում որպես պետական կրոն հռչակման 1700-ամյակի տոնակատարության նախապատրաստման, հայեցի կրթության և դպրության համակարգում Հայ Եկեղեցու դերի և նշանակության, զանգվածային լրատվական միջոցներով նրա դավանանքի քարոզության, ինչպես նաև Երևանի Մայր տաճարի շինարարությանը վերաբերող հարցեր:

ՀՀ վարչապետի մամուլի գրասենյակ